ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հիմնական ցուցանիշների վերաբերյալ









2019 թվականին Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ-ն անվանական արտահայտությամբ, ՀՆԱ-ի 101.4% դեֆլյատորի պարագայում, կազմել է 6 տրիլիոն 551.8 մլրդ դրամ՝ պետական բյուջեով 2019 թվականի համար ծրագրված 6 տրիլիոն 756.2 մլրդ դրամի (ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 104 %), ՄԺԾԾ-ով 2019 թվականի համար ծրագրված 6 տրիլիոն 630.4 մլրդ դրամի դիմաց (ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 104 %) և 2018 թվականի 6 տրիլիոն 5.1 մլրդ դրամի դիմաց (ՀՆԱ-ի դեֆլյատորը՝ 102.5 %) :

ՀՆԱ-ի իրական աճը Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին արձանագրվել է 7.6 %-ի մակարդակում, ինչը 2.7 %- ային կետով գերազանցում է պետական բյուջեով 2019 թվականի համար ծրագրված մակարդակը, 2.3 %-ային կետով գերազանցում է ՄԺԾԾ-ով ծրագրված մակարդակը և 2.4 %-ային կետով գերազանցում է 2018 թվականի մակարդակը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետությունը տնտեսական աճի 2019 թվականի ցուցանիշով առաջատար է ԵԱՏՄ գործընկեր-երկրների, Վրաստանի և Ադրբեջանի հետ համեմատությամբ: Մասնավորապես, ՀՀ-ում ՀՆԱ-ի 7.6 % իրական աճի պարագայում, *Ռուսաստանի Դաշնությունում արձանագրվել է ՀՆԱ-ի 1.3 % իրական աճ, Բելառուսի Հանրապետությունում՝ ՀՆԱ-ի 1.2% իրական աճ, Ղազախստանում՝ ՀՆԱ-ի 4.5 % իրական աճ, Ղրղզստանում՝ ՀՆԱ-ի 4.5 % իրական աճ, Ադրբեջանում՝ ՀՆԱ-ի 2.3% իրական աճ և Վրաստանում՝ ՀՆԱ-ի 5.1 % իրական աճ:

2019 թվականին ՀՆԱ-ի աճին ծառայությունների ճյուղի նպաստումը կազմել է 5.2%-ային կետ, պետական բյուջեով 2019 թվականի համար ծրագրված 2.5 %-ային կետի և 2018 թվականի 4.6 %-ային կետի դիմաց: Արդյունաբերության նպաստումը կազմել է 1.9 %-ային կետ՝ ծրագրված 0.8 %-ային կետի և 2018 թվականի 1.1 %-ային կետի դիմաց: Շինարարության ճյուղի նպաստումը կազմել է 0.3 %-ային կետ՝ ծրագրված 0.4 %-ային կետի և 2018 թվականի 0.1 %-ային կետի դիմաց: Զուտ անուղղակի հարկերը ՀՆԱ-ի իրական աճին նպաստել են 0.7 %-ային կետով՝ ծրագրված 0.5 %-ային կետի և 2018 թվականի 0.8 %-ային կետի դիմաց: 2019 թվականին գյուղատնտեսության ազդեցությունը ՀՆԱ-ի իրական աճին եղել է բացասական՝ -0.5 %-ային կետ՝ ծրագրված 0.7 %-ային կետ դրական նպաստման և 2018 թվականի -1.3 %-ային կետի դիմաց:

*Աղբյուրը Արժույթի Միջազգային Հիմնադրամի 2019 թվականի հոկտեմբեր և 2020 թվականի ապրիլ ամսվա Համաշխարհային տնտեսական հեռանկարների զեկույցներ

ԱԺԲԳ









Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում 2019 թվականին կազմել է 38.7%, որը թեև 2.7 %-ային կետով ցածր է ծրագրված մակարդակից,սակայն 0.9 %-ային կետով ավել է 2018 թվականի ցուցանիշից: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծումը ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է 53.1 %՝ 0.3 %-ային կետով պակաս քան ծրագրված էր և 0.4 %-ային կետով պակաս քան 2018 թվականին էր: Արդյունքում ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռը ՀՆԱ-ի նկատմամբ 2019 թվականին կազմել է -14.5%՝ 1.2 %-ային կետով բարելավելով 2018 թվականի ցուցանիշը, սակայն ծրագրված մակարդակը վատթարացնելով 2.5 %-ային կետով:

2019 թվականին 2018 թվականի նկատմամաբ 1.2 %-ային կետով բարելավվել է նաև ընթացիկ հաշիվ / ՀՆԱ ցուցանիշը՝ կազմելով -8.2 % : 2019 թվականի համար ծրագրված էր -3.7 %:

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2019 թ. կազմել է 8154.1 մլն ԱՄՆ դոլար՝ 2018թ. համեմատ աճելով 10.6 %-ով: Ընդ որում, առևտրային հաշվեկշիռ / ՀՆԱ ցուցանիշը 2019 թվականին կազմել է -15 %՝ 1.4 %-ային կետով վատթարացնելով ծրագրված և 0.6 %-ային կետով վատթարացնելով 2018 թվականի ցուցանիշները:

Միջին գնաճը 2019 թվականին արձանագրվել է 1.4 %-ի մակարդակում՝ պետական բյուջեով ծրագրված 3.5 %-ի, ՄԺԾԾ-ով կանխատեսված 3.8 %-ի և 2018 թ.՝ 2.5 %-ի դիմաց: Իսկ գնաճը ժամանակաշրջանի վերջում 2019 թվականին կազմել է 0.7%՝ պետական բյուջեով ծրագրված 4+-1.5 %-ի, ՄԺԾԾ-ով կանխատեսված 4.0 %-ի և 2018 թ.՝ 1.8 %-ի դիմաց:

2019 թվականին պետական բյուջեի եկամուտները կազմել են 1 տրիլիոն 565.5 մլրդ դրամ, ինչը կազմում է 2019 թվականի ճշտված պլանի 97.3 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշի 107.7 %-ը և գերազանցում է 2018 թվականի մակարդակը 16.7 %-ով կամ 224 մլրդ դրամով:

2019 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 1 տրիլիոն 629.4 մլրդ դրամ, ինչը կազմում է 2019 թվականի ճշտված պլանի 92.4 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշի 101.5 %-ը և գերազանցում է 2018 թվականի մակարդակը 12.6 %-ով կամ 182.3 մլրդ դրամով:

2019 թվականի պետական բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 63.9 մլրդ դրամ, ինչը կազմում է 2019 թվականի ճշտված պլանի 41.6 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշի 42.4 %-ը և 2018 թվականի մակարդակից նվազ է 39.3 %-ով կամ 41.5 մլրդ դրամով:

2019 թ. պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 23.9 %՝ պետական բյուջեով ծրագրված մակարդակից 1.6 %-ային կետով ավել, ՄԺԾԾ-ով կանխատեսվածից 2 %-ային կետով ավել և 2018 թվականի մակարդակից 1.6 %-ային կետով ավել:

ԱԺԲԳ









2019 թ. պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 24.8 %՝ պետական բյուջեով ծրագրված մակարդակից 0.4 %-ային կետով ավել, ՄԺԾԾ-ով կանխատեսվածից 0.6 %-ային կետով ավել և 2018 թվականի մակարդակից 0.7 %-ային կետով ավել:

2019 թ. պետական բյուջեի պակասուրդ(դեֆիցիտ)/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է -1.0 %՝ 1.2 %-ային կետով բարելավելով պետական բյուջեով ծրագրված մակարդակը, 1.2 %-ային կետով բարելավելով ՄԺԾԾ-ով կանխատեսվածը և 0.7 %-ային կետով բարելավելով 2018 թվականի մակարդակը

2019 թվականի պետական բյուջեի եկամուտները փաստացի ձևավորվել են՝

- հարկային եկամուտներից և պետական տուրքերից՝ 1 տրիլիոն 464.3 մլրդ դրամ, որը կազմում է 2019 թվականի ճշտված մակարդակի 98.4 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատվածի 105.2 %-ը և գերազանցում է 2018 թվականի ցուցանիշը 16.4 %-ով կամ 206.2 մլրդ դրամով,
- պաշտոնական դրամաշնորհներից՝ 12.4 մլրդ դրամ, որը կազմում է 2019 թվականի ճշտված մակարդակի 30.9 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատվածի 32.7 %-ը և գերազանցում է 2018 թվականի ցուցանիշը 10.7 %-ով կամ 1.2 մլրդ դրամով,
- այլ եկամուտներց՝ 88.8 մլրդ դրամ, որը կազմում է 2019 թվականի ճշտված մակարդակի 110.6 %-ը, ՄԺԾԾ-ով հաստատվածի 374.7%-ը և գերազանցում է 2018 թվականի ցուցանիշը 22.8 %-ով կամ 16.5 մլրդ դրամով:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2019 թվականին կազմել է 22.4%՝ 1.7 %-ային կետով գերազանցելով պետական բյուջեով 2019 թվականի համար ծրագրված ցուցանիշը, 1.4 %-ային կետով գերազանցելով ՄԺԾԾ-ով ծրագրված մակարդակը և 0.5 %-ային կետով գերազանցելով 2018 թվականի փաստացի մակարդակը:

2019 թվականին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 474.4 մլրդ դրամ՝ 2018 թվականի 438.2 մլրդ դրամի դիմաց,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 127.5 մլրդ դրամ՝ 2018 թվականի 109.1 մլրդ դրամի դիմաց,
- շահութահարկից մուտքերը կազմել են 181.3 մլրդ դրամ՝ 2018 թվականի 170.1 մլրդ դրամի դիմաց,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 409.9 մլրդ դրամ՝ 2018 թվականի 356.6 մլրդ դրամի դիմաց,

* 2016-2017 թթ. հարկային եկամուտների ցուցանիշները համադրելի չեն 2018-2019թթ. ցուցանիշների հետ, ** 2019 թվականի հարկային եկամուտների փաստացի ցուցանիշներում ներառված չեն անցումային գերավճարները

ԱԺԲԳ









- մաքսատուրքերից մուտքերը կազմել են 95.1 մլրդ դրամ, ինչը 2018 թվականի ցուցանիշը գերազանցում է 18.6 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 58.3 մլրդ դրամ՝ 2018 թվականի 54.2 մլրդ դրամի դիմաց,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 29 մլրդ դրամ՝ 2018 թվականի 21.3 մլրդ դրամի դիմաց,
- նպատակային սոցիալական վճարներից մուտքերը կազմել են 18.7 մլրդ դրամ, ինչը 2018 թվականի ցուցանիշը գերազանցում է 7.5 %-ով,
- այլ հարկային եկամուտների գծով մուտքերը կազմել են 24.2 մլրդ դրամ՝ 2018 թվականի 28.5 մլրդ դրամի դիմաց,
- պետական տուրքերից մուտքերը կազմել են 45.9 մլրդ դրամ, ինչը 20.8 %-ով ավել է քան 2018 թվականին էր:

2019 թվականին պետական բյուջի ծախսերում 1 տրիլիոն 437.1 մլրդ դրամը կազմել են ընթացիկ ծախսերը, որոնք ճշտված ցուցանիշը զիջում են 4.2 %-ով, հաստատված մակարդակը գերազանցում են 0.8 %-ով, իսկ 2018 թվականի մակարդակը գերազանցում են 10.6 %-ով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 192.3 մլրդ դրամ՝ շուրջ 26.5 % պակաս ճշտված պլանից, 13.4 %-ով պակաս հաստատված ցուցանիշից, բայց 30.3 %-ով ավել 2018 թվականի մակարդակից: Ընդ որում, ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2019 թվականին կազմել են 193.0 մլրդ դրամ՝ 26.5 % պակաս ճշտված պլանից, շուրջ 5 % պակաս ՄԺԾԾ համապատասխան ցուցանիշից, բայց 36.3 %-ով ավել քան 2018 թվականին էր:

Հատկանշական է, որ 2019 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը բացարձակ արժեքով գերազանցել են պետական բյուջեի պակասուրդը՝ պահպանելով հարկաբյուջետային կանոնը:

2019 թվականի պետական բյուջեի ծախսերում՝

- 320.1 մլրդ դրամ տրամադրվել են ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 95 %, հաստատված ցուցանիշից ավել է 1.4 %-ով, իսկ 2018 թվականի համեմատ ավել է 14.9 %-ով,
- 111.9 մլրդ դրամ տրամադրվել է տնտեսական հարաբերությունների բաժնին: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 71.3 %, հաստատված ցուցանիշի նկատմամբ 83.9 %, իսկ 2018 թվականի նկատմամբ՝ 99.7 %-ով,

ԱԺԲԳ









* Կետագծերով նշված են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում ծրագրված ցուցանիշները

- 315.6 մլրդ դրամ տրամադրվել է պաշտպանության բնագավառին: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 94.1 %, հաստատված ցուցանիշը գերազանցում է 0.7 %-ով, իսկ 2018 թվականի համեմատ ավել է 32.3 %-ով,
- հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին տրամադրվել է 143.7 մլրդ դրամ, որը ճշտված պլանից պակաս է 4.4 %-ով, հաստատված ցուցանիշից ավել է 3.5 %-ով և 201 8 թվականի մակարդակը գերազանցում է 16.7 %-ով,
- 5.8 մլրդ դրամ տրամադրվել է շրջակա միջավայրի պաշտպանությանը: Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 53.2 %, հաստատված ցուցանիշի նկատմամբ՝ 49.1 % և 2018 թվականի նկատմամբ 102.2 %,
- 16.2 մլրդ դրամ տրամադրվել է բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին, ինչը ճշտված պլանից պակաս է 36.6 %-ով, հաստատված ցուցանիշից պակաս է՝ 10 %-ով, սակայն 2018 թվականի մակարդակը գերազանցում է 38.8 %-ով,
- 99.3 մլրդ դրամ տրամադրվել է առողջապահությանը, ինչը կազմում է ճշտված պլանի 95.6 %-ը, իսկ հաստատված և 2018 թվականի համապատասխան ցուցանիշներից ավել է համապատասխանաբար՝ 8.2 %-ով և 24.8 %-ով
- 453.9 մլրդ դրամ տրամադրվել է սոցիալական պաշտպանությանը, որը կազմում է ճշտված պլանի 97.5 %-ը, հաստատված ցուցանիշի՝ 102.2 %-ը և 2018 թվականի՝ 109 %-ը,
- 129.3 մլրդ դրամ տրամադրվել է կրթությանը, որը կազմում է ճշտված պլանի 81.8 %-ը, հաստատված ցուցանիշի՝ 91.2 %-ը և 2018 թվականի՝ 106.3 %-ը,
- 33. 5 մլրդ դրամ տրամադրվել է հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառներին: Արդյունքում, ճշտված պլանը կատարվել է 94 %-ով, հաստատված ցուցանիշը՝ 110.6 %-ով և 32.6 %-ով գերազանցում է 2018 թվականի մակարդակը:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

- ՀՀ պետական պարտքը կազմել է 3 տրիլիոն 513.4 մլրդ դրամ, որը 2.7 %-ով պակաս է ծրագրված մակարդակից, բայց 4.9 %-ով ավել է 2018 թվականի համապատասխան ցուցանիշից,
- ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 2 տրիլիոն 776.2 մլրդ դրամ, որը 3.5 %-ով պակաս է ծրագրված մակարդակից, բայց 2018 թվականի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 3.6 %-ով,
- ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 737.2 մլրդ դրամ, որը ծրագրված և 2018 թվականների մակարդակները գերազանցում է համապատասխանաբար՝ 0.4 %-ով և 9.9 %-ով,

ԱԺԲԳ









- ՀՀ պետական պարտքը ԱՄՆ դոլարով արտահայտված կազմել է 7 միլիարդ 324.2 մլն , որը 1.3 %-ով պակաս է ծրագրված մակարդակից , սակայն 5.8 %-ով ավել է 2018 թվականի համապատասխան ցուցանիշից,
- ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 5 մլրդ 787.5 մլն ԱՄՆ դոլար, որը 2.1 %-ով պակաս է ծրագրված մակարդակից, բայց 2018 թվականի մակարդակը գերազանցում է 4.5%-ով,
- ՀՀ ներքին պետական պարտքը կազմել է 1 մլրդ 536.7 մլն ԱՄՆ դոլար՝ ծրագրված և 2018 թվականի ցուցանիշները գերազանցելով համապատասխանաբար 1.7 %-ով և 10.9 %-ով,
- ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3 տրիլիոն 278.7 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 6 մլրդ 834.9 մլն), որը 8.6 %-ով պակաս է ՄԺԾԾ-ով հաստատված մակարդակից, 2.5 %-ով պակաս է ծրագրված մակարդակից, բայց 6.3 %-ով գերազանցում է 2018 թվականի մակարդակը,
- ՀՀ ԿԲ արտաքին պարտքը կազմել է 234.7 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 489.3 մլն), որը ծրագրված և 2018 թվականի ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար՝ 5.4 %-ով և 11.8 %-ով,
- ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 541.5 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 5 մլրդ 787.5 մլն), որը 3.3 %-ով պակաս է ծրագրված մակարդակից, իսկ 2018 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 5.3 %-ով;
- ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 737.2 մլրդ դրամ (ԱՄՆ դոլարով՝ 1 մլրդ 536.7 մլն), որը 1 %-ով պակաս է ՄԺԾԾ-ով հաստատված մակարդակից, 0.3 %-ով գերազանցում է ծրագրված մակարդակը, 9.9 %-ով գերազանցում է 2018 թվականի մակարդակը:

* Կետագծերով նշված են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում ծրագրված ցուցանիշները

ԱԺԲԳ





2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ թեև բացարձակ արժեքով ՀՀ պետական պարտքն աճել է, այդուհանդերձ ՀՀ պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2018 թվականի համեմատ նվազել է 2.18 %-ային կետով՝ կազմելով 53.62 %: Վերջինս 0.12 %-ային կետով ավել է պետական բյուջեով ծրագրված մակարդակից:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 42.4 %՝ 0.2 %-ային կետով պակաս քան ծարագրվել էր պետական բյուջեով և 2.2 %-ային կետով պակաս քան 2018 թվականին էր:

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, որը կառավարության պարտքի կառավարման տեսանկյունից կարևոր ուղենշային ցուցանիշ է, 2018 թվականի (51.4%) նկատմամբ նվազել է 1.4 %-ային կետով՝ կազմելով 50.04 %: Ընդ որում, վերջինս թեև 0.24 %-ային կետով ավել է քան ծրագրվել էր պետական բյուջեով, այդուհանդերձ 4.1 %-ային կետով պակաս է ՄԺԾԾ-ով հաստատված մակարդակից:





* Կետագծերով նշված են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեում ծրագրված ցուցանիշները





2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 38.8%՝ 0.1 %-ային կետով պակաս քան ծարագրվել էր պետական բյուջեով և 1.3 %-ային կետով պակաս քան 2018 թվականին էր:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման տեսանկյունից կարևոր ուղենշային ցուցանիշ է նաև ՀՀ կառավարության պարտքի կառուցվածը, ըստ որի ՀՀ կառավարության ներքին պարտքը պետք է լինի առնվազն 20 %: 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության ներքին պարտքը ՀՀ կառավարության պարտքի մեջ կազմել է 22.45 %, որը թեև ծրագրված մակարդակից ցածր է 4.75 %-ային կետով, բայց 0.64 %- ային կետով ավել է ծրագրված մակարդակից, ինչը դրական արդյունք է: Սա փաստում է, որ ՀՀ կառավարության պարտքի կառավարումն իրականացվում է սահմանված ուղենշային ցուցանիշների տիրույթում:

*Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ 2016-2019թթ. պետական բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, ՀՀ 2019 թ. հաստատված պետական բյուջեն, ՀՀ 2020 թ. պետական բյուջեն, 2019-2021թթ. ՄԺԾԾ-ն, ՀՀ վիճակագրական կոմիտեի և ՀՀ ֆինանսների նախարարության կայքի տվյալները և Արժույթի Միջազգային Հիմնադրամի 2019 թվականի հոկտեմբեր ամսվա և 2020 թվականի ապրիլ ամսվա Համաշխարհային տնտեսական հեռանկարների վերաբերյալ զեկույցները: